

ԳՐԱԿԱՆՔ

ՄԱՍԻՍԻ ՊԵՐՅԱԿ

ԵՐԻՏԱՍԱՐԴ ԳՐՈՂԸ

տեմբերին ուր վենետիկէն նաւ մտաւ, և 1369 թ յունուար 16 ին ուր կիպրոսի մէջ սպանուեցաւ, Պետրոս առաջին կրցաւ թագաւորական հեղինակութիւն բանեցնել կիլիկիոյ վրայ, և անկարելի պիտի չըլլար գտնել այս իշխանէն դրամներ՝ հայկական նշաններով»։ Եւ իրաւցնէ իրմէ գտնուած է դրամ մը հայերէն գրերով։

Եւ չեմ գիտեր թէ ինչո՞ւ համար կեղծ համարիլ այս դրամը. արդեօք միակն ըլլալուն համար. բայց այս հանգամանքը կրնայ մեկնուիլ անով որ ապերջանիկ իշխանը Հայոց ալ թագաւոր ըլլալէն վերջ՝ Կոստով սպաննուած ըլլալով, ժամանակ չէ մնացած իր հայատառ դրամները բազմապատկելու։ Եթէ նոյն իսկ կեղծ համարուի մետաղի այս կտորը, պիտի չդադրի Պետրոսի Հայոց ալ թագաւոր եղած ըլլալուն յիշատակարան մ'ըլլալէ, քանի որ զայն կեղծողը աւելի հին աղբիւրէ առած պիտի ըլլայ այս տեղեկութիւնը։

Կարծեմ ցարդ մէջ բերուած վկայութիւնները կարենան հաստատել թէ Պետրոս Ա. կուսակցութեան մը ոչ ընտրելին միայն մնաց այլ և մեծ բազմութեան մը հաւանութեամբ ընտրուեցաւ, թագաւոր եղաւ։

Եւ երբ մէկը թագաւոր եղած է, անոր համար կրնայ գրուիլ թագաւոր պսակունցաւ բացատրութիւնը՝ մանաւանդ գրական յօդուածի մը մէջ ուր դիտուած է նոյն անձին դէմքը դուրս ցատեցնել, ինչպէս էր իմ յօդուածը, — եթէ նոյն իսկ նիւթապէս գլխուն վրայ պսակադրութեան արարողութեանց տեսակներէն ո՞ր և է մէկը կատարուած չըլլայ, եթէ զայս կը հասկնայ Պ. Բասմաճեան՝ եթէ փորձէ դարձեալ պնդել թէ կիպրոսի Պետրոս Ա. Հայոց թագաւոր չէ պսակուած։

Հ. Ն. ԱՆՏՐԻՍԵԱՆ



Լաւ չէ՛, երբ գրողը շատ երկրպագուներ ունի։ Միայն ճահճային բոյսերին չի վնասում աւելորդ խոնաւութիւնը։ Կաղնիներին չափաւոր խոնաւութիւն է պէտք։

Ես պիտի պատմեմ մի երիտասարդ գրողի մասին, որը միանգամից մեծ ժողովրդականութիւն ձեռք բերեց, այն մասին, թէ նա ինչպէս ծիծաղելի և անկարգ էր պահում իրեն՝ կուլ տալով գովասանքները տարափը, և թէ ինչ պատահեց նրա հետ, երբ նրա գլուխը պտոյտ էր գալիս փառք ու պատուից։

Մի մի պարզասիրտ երիտասարդ էր, բայց ոչ բողբոջի յիմար և իր ընկերներին արհեստով տարբերում էր նրանով, որ միշտ անկեղծ էր, ուստի և ամեն օր հակասում էր իրեն։

Նա ապրում էր այնպիսի մի երկրում, որի գրականութիւնը համաշխարհային համբաւ էր վայելում, և երբ նա նոր էր ժողովրդականութիւն ստանում ու երբեմն անյաբողութիւնների հանդիպում, — թեւ ըստ հաւատարմութեամբ էր վերաբերում դէպի իր ձեռք բերած այդ համբաւը և մտածում. «Տարօրինակ է — փո՛ղ ես փչում՝ չեն լսում, զուռնա ես ածում՝ հրճում են, ծիծաղում...»

Մեր այս երիտասարդը երբէք համեստ չէր։ Բայց նա գիտէր իր արժէքը, ահա՛ թէ բանն ինչու՞ն է... Եւ մէկ էլ նա գիտէր, որ իր հայրենի երկրում գոյութիւն չունի հասարակութիւն, այլ միայն ժողովուրդ և որ իսկապէս հասարակութիւնն է ստեղծում գրական և այլ համբաններ։

Ժողովուրդը ապրում է իր կենսըով, հաւատում է ֆալշիներին իր ամբողջ կենսըում աշխատում է, բայց միշտ էլ քաղցած է միտում, և ամբողջ գրականութիւնը,

Հասարակութիւնից սիրուած ուրիշ գեղա-
րուեստների հետ միասին՝ պատրաստ է
փոխել մի շնչին բանի հետ:

Թէպէտ մեր երիտասարդը շատ լաւ դի-
տէր այս բոլորը, սակայն — նա մարդ էր:
Եւ բոլորը, բոլոր գրողներն ու խորագէտ
մարդիկ — շատ թէ քիչ չափով սահմա-
նափակ հասկացողութեան տէր են: Նա
զգաց, որ հասարակութեան լարուած ու-
շադրութիւնը դէպի իր ոյժերը՝ հաճելի է
իրեն: Նա սկսեց իր ընթերցողներից փա-
ղաքական նամակներ ստանալ:

Մի ընթերցող գրում էր. « Տաղանդա-
ւոր », մի ուրիշը սեւ թանաքով սպիտակ
թղթի վրա արտայայտել էր՝ « Մեծապա-
տիւ », մի այլ ընթերցողուհի էլ գրել էր
հասարակ, բայց ուժեղ՝ « Հոգեակա, շնոր-
հակալ եմ », կարծես թէ գրողը նրա հա-
մար կոփտացու մետաքսեղէն զրկած լի-
նէր: Իսկ մի գրափաճառ էլ նամակ էր
ուղարկել հետեւեալ բովանդակութեամբ.
« Մեծապատիւ պարոն հեղինակ! Հետա-
քըրքուելով, թէ ինչու հասարակութիւնը
այսպէս եռանդով գնում է Ձեր ամենա-
յարգելի գրքերը, ես կարդացի դրանք և
ինձնից բղիսցին հետեւեալ տողերը.

Իմ յուսահատ հոգու մէջ,
Որպէս ճահճի շուշաններ,
Իրազեցին ու փթեցին
Ազատ կեանքի ցնորքներ,
Բայց աւանդ շուտ թառամած՝
Սրտիս խորքում փթեցին
Ու զգուհի, խոտելի,
Նեխուած բուրմունք փչեցին.
Բայց դու հոգիս ցնցեցիր
Քո վառ խօսքով կենսատու,
Ուժգին թափով ցրեցիր
Մտախուղը իմ հոգու.
Եւ ես նորից ոյժ առած՝
Ողբի ելայ արիացած,
Այժմ հպարտ, պանծալի,
Արձակում եմ ես խոզի
Այրուած մազի անոյշ բոյր...

Խորին յարգանք՝
ՍԻՄԷՅՈՆ ՆԱՍՐԵՒՈՎ.

Եւ ուրիշ շատ քաղցր համակրութիւն
պարունակող նամակներ էր ստանում մեր
գրողը հասարակութիւնից: Իսկ սաստանան,
գրողի հաւասարարիմ ուղեկիցը, ծիծաղով
փսփսում էր նրա ականջին. « Մի՛ շփո-
թուի, անմիտ. այս բոլորը քո վարձա-
տրութիւնն է, դու այժմ հասարակութեան
համար ես, ինչպէս ջահէլ սիրուհին՝ զա-
ռամեալ ծերունու: Բացի դրանից, տրտում
մի ձեւացիր, որովհետեւ — « Իրածանը սի-
րում է, որ իրեն տապակեն սերի մէջ,
իսկ գրողը — որ իրեն խեղդեն փառքի
ծուխի մէջ: Խօ՛—խօ՛—խօ՛! »:

Եւ ահա մեր երիտասարդը սկսեց կա-
մացուկ երեւալ իր վրա սիրահարուած
հասարակութեան աչքին: Տեսնում է — որ
այդ հասարակութիւնը ծափահարում է ի-
րեն: Եւ նա սկսեց դրան ընտելանալ, ինչ-
պէս հարբեցողը՝ օդիին, և նրա համար
տխուր էր ապրել առանց ծափահարու-
թիւնների, ու մեր երիտասարդը սկսեց
փրփուիլ:

Ահա՛ մէկ անգամ մի մօղեոն տեղում
ամբոխը շրջապատեց նորան, դէմ արեց
պատին և ծափահարելով՝ զգացած գո-
չում էր. « Բաւաւ, բաւաւ »: Իսկ նա սկսեց
ամբոխի առաջ սիրալիւր ժպտալ, — և այդ
նրա համար այնքան հաճելի էր, քաղցր,
որ կարծես նրան մեղրի մէջ տապակում
լինէին...

Առաջին անգամն էր նա հասարակու-
թիւն տեսնում այսպիսի մօտիկ տարա-
ծութեան վրայ... Եւ յանկարծ նա իրեն
վատ, նոյն իսկ շատ վատ զգաց. նրան
թւաց, որ հիմա կսկսեն իրեն թեւերի տակը
խոտում տալ և նրա գլխում ծագում էին
զանազան անհեթեթ մտքեր: Թուում էր, որ
ամբոխից իւրաքանչիւրը, նայելով նրան,
իր մօղում համեմատում էր իր ականջները
գրողի ականջների հետ, կամենալով ճշտիւ
որոշել, թէ որին է երկար: Եւ մեր երի-
տասարդը զգաց, որ իր ականջները եր-
կարում ու հասնում են հսկայական չա-
փերի: Իսկ հասարակութիւնը նայում էր
և զոչում. « Բաւաւ, բաւաւ »: Այն ժա-
մանակ մեր երիտասարդի մօղում բորբո-

քուեց չար կասկածը՝ թէ արդեօք ինքը իրենը չի պատկանում և նա մտածեց. « Նրանք ինձ իրենց սեփականութիւն են համարում և հիմա կըսկսին ինձանով զնգակ խաղալ... » Իսկ սատանան, կանգնած նրա ետեւում, զգուշիկ կերպով քրքշուկ էր — « Խե-խե-խե, տես ! » : Նայեց մեր թշուառ երիտասարդը և ինչ տեսաւ. — տաս հոգին դարձել էր մի քանի հարիւր և շարունակ ծափահարում էին : Հասարակութեան աչքերը, որպէս հարիւրաւոր ասեղներ, խրոււմ էին մեր երիտասարդի կրծքի մէջ, և նա շփոթուած՝ նայեց փոքրիկ ու տեսաւ, որ նրանց դէմքերը միանում ու կազմում են մի մեծ, մոպլ և ստրկական դէմք, և դրա վրա չկային աչքեր այլ դրանց փոխարէն միայն երկու պղտոր բծեր և այդ դէմքի վրա քիթը այնպէս երկար էր, ինչպէս փղի կնճիթը :

« Նայի՛ր, — ասաց սատանան դիւային ծիծաղով, — նրա առաջնորդները քաշել երկարացրել են նրա քիթը բայց չեն վառել նրա սրտի կրակը, և ահա նա կոյր է : Նայի՛ր, ինչպիսի լեզու ունի նա, նա՛, յի՛ր » :

Մեր հերոսի աչքերի առաջ շարժւում էին ահագին, հաստ պոռոշները՝ կազմելով մի խորը, սև փոս, որի խորքում թոթովում էր ինչ-որ շարժուն, կարճ, մսի հաստ կտոր, որ դուրս էր տալիս. « Բռււ-աւ-ւո, բռււո » :

« Իս, պարոններ, հաւատում եմ ձեր անկեղծութեանը : Բայց ինձ համար անհասկանալի է, թէ ինչով ես արժանացայ այսպիսի ջերմ համակրութիւնների : Ի՞ր-բեմն, գիտե՞ք, ինձ թոււմ է, որ դուք ինձ սիրում էք նրա՛ համար, որ ես չեմ հազնում սիրտուկ, և իմ պատկերների մէջ յաճախ գործ եմ ածում անհամեստ խօսքեր, և երբեմն էլ ինձ թոււմ է, որ եթէ ես սովորէի ձախ ոտքովս գրել լիբիքական ոտանաւորներ, դուք աւելի ջերմ, աւելի մեծ ուշադրութեամբ կը վերաբերվէիք դէպի ինձ » :

— « Բռււո, բռււո », դուրս ժայթքեց ամբոխի միջից :

« Իւ, գիտե՞ք, ինձ թոււմ է որ դուք իսկական ընթերցողներ չէք, այլ միայն համակրողներ : Ընթերցողը գիտէ, որ ո՛չ թէ մարդն է գնահատելի, այլ մարդկային հոգին, և զորդի վրայ այնպէս չեն նայում, ինչպէս կարծես երկու գլխանի հորթի վրայ : Իսկական ընթերցողը նրան կարդում է, բայց նրան չի՛ հաւատում, այլ ինքն է մտածում զրուածքի մասին, « այս այսպէս է, իսկ այս այսպէս չէ » և մտածելով, նա մի լաւ բան է անում, և յետոյ այդ լաւ բանը կոչում են գործ, իսկ դուք պարոններ, ո՛չ թէ գործ էք կատարում, այլ սկանդալներ սարքում, և իսկական ընթերցողներ շատ քիչ կան երկրիս վրա, իսկ այնպիսիներն, ինչպիսին դո՛ւք էք, — որքան ուզէք : Ձեռքս խղճիս վրա դրած՝ ես պէտք է ասեմ, որ ո՛չ մի համակրանք, ոչ մի յարգանք չեմ զգում դէպի ձեզ... Ընկերներս ասում են, որ պէտք է յարգել հասարակութիւնը, բայց ո՛չ ոք չը կարողացաւ բացատրել, թէ ինչ չա՛ւ : Ինչ էք կարծում, ինչ բանի համար կարելի է ձեզ յարգել » :

Գորդը լռեց՝ հարցական հայեացք ձգելով ամբոխի վրա : Վերջինս նոյնպէս լուռ էր և կարծես մի քիչ մթազնեց :

Որտեղից որտեղ սառը քամի փչեց :

— « Այ տեսնում էք, — երկար լուռութիւնից յետոյ ասաց զորդը, — դուք ինքներդ անզօր էք ասելու, թէ ի՞նչ բանի համար կարելի կլինէր ձեզ յարգել » :

Մի ինչ-որ շէկ մարդ բերանը բացեց և հաստ ձայնով արտասանեց. « Մենք մարդ ենք » :

« Բայց շատ կան արդեօք ձեր մէջ իսկական մարդիկ : Գուցէ հազարից հինգը միայն այդպիսիներ լինին, որոնք հաստ հաւատում են, որ մարդը կեանքի ստեղծագործողն ու իշխողն է և նրա իրաւունքն է մտածել, խօսել, քայլել, — սուրբ իրաւունքն է : Գուցէ հազարից հինգը միայն ազատ կուտւմ են այդ իրաւունքի համար և անվեհեր ընկնում կուի դաշտում : Ձեր մեծամասնութիւնը կեանքի ըստրուկն է կամ նրա լկտի խաղէինը, և

դուք բոլորդ խոնարհ մեղշաններ էք, որ ժամանակաւորապէս փոխարինում էք իսկական մարդկանց, այն բոլորը, ինչ որ ձեզանում կայ մարդկային, — մի միայն զօրօգիական է։ Ահա ես նայում եմ ձեր պղտոր և վախկոտ աչքերին ու երկիւղով տեսնում, թէ որքան քիչ կան ձեր մէջ համարձակ, անկեղծ մարդիկ։ Աղքատ է մեր երկիրը համարձակ մարդկանցով, իսկ այժմ այնպիսի ժամանակ է, որ մեզ հերոսներ են պէտք ։»

Մի քսան հոգի մէջքները ճառախօսին դարձրին ու գնացին, իսկ նա շարունակեց. « Լաւ, աշխոյժ մարդը միշտ մի բանի ձգտում է, մի բան փնտրում, իսկ դուք ապրում էք խաղաղ, հանգիստ անշարժ — այնպէս, ինչպէս հրամայուած է ձեզ։ Ձեր կեանքը անձուկ է, մտածել ծուլանում էք, շարժելուց վախում։ Ձեր շուրջը, ամեն տեղ, ինչպէս կոկետուհու հիւրասենեակում դարակներով վրա դարսած շնչին, անպէտք բաները, կիսով չափ փթած աւանդութիւններ են և զանազան կենսական օրէնքներ, որոնք ոչ մի բանի պէտք չեն։ Այդ բոլորը խանգարում են ձեզ շարժուել, բայց այդ բոլորը ձեր փոքրիկ իտէալներն են, իսկ դուք չէք համարձակում դրանցից ազատուել, թէ և դրանք ձեր կապանքներն են կազմում։ Եւ երբ քամին դաշտից մաքուր բուրմունք է բերում, դուք թոյլ չէք տալիս, որ այդ խառնիւրդ մարմնից արձակուած կեղտոտ հոտին, դուք վախենում էք, որ ձեր սիրտը կորող է փնտնուել դրանից և իսկոյն քակում էք ձեր մարմնի բոլոր օդանցքները։ Անհանգստութիւնը դուք չէք սիրում, անհանգստութիւնը վախ է պատճառում ձեզ։ Բայց ձեզ մի նիւթ պէտք է խօսակցութեան համար, պէտք է մի բանով զբաղեցնէք ձեր հիւրերին, և որպէս եկեղեցու դռան մուրացիկները, դուք մեկնում էք ձեր ձեռքը դէպի զբաղանդութիւնը, որպէս զի այնտեղից մի բան վերցնէք՝ զբաղուելու համար։

Գրականութիւնը ոչ սէր, ոչ էլ ատեւութիւն է զարթեցնում ձեր սրտերում,

— ոչինչ, բացի համակրութիւն արտայայտող աղաղակներին կամ հայեցանքից, պարսաւանքից։ Դուք մարդիկ չէք, դուք հանդիսատեսներ էք, դուք ամբոխ էք, կեանքը ոչինչ չէր կորցնիլ, եթէ դուք մի անգամից կորչէիք, հեռանայիք նրանից, եթէ բոլորդ գեոնի տակ անցնէիք, ոչինչ չէր փոխուել երկրիս վրա»։

— Գրողը վախից փակեց աչքերը, զգալով, որ կարծես ասեղներով ծակծակում են իրեն։ Բայց երբ նորից բաց աչքից, նրա առաջ կանգնած էին մարդիկ, — շատ, շատ սովորական մարդիկ էին կանգնած նրա առաջ՝ ամուր պարիսպ կազմելով։ Նրանց դէմքերը ժպտում էին, աչքները փայլատակում մանկական բաւականութեամբ՝ կարծես նոր խաղալիքներ տեսնելով, և ամեն ինչ նրա շուրջը հասարակ և սովորական էր։ Այդ ժպիտներից և սիրալիւր հայեացքներից զրոյդ իւրեն լաւ զգաց, վախկոտութիւնը անցավ նրա սրտից և նա ուզեց հասարակութեանը մի բան ասել, մի բարեկամական, մեր տերմական խօսք ուղղել։ Եւ, որքան կարող էր, խորը հառաչեց և ասաց՝ ձեռքը վհատուած սրտին դնելով. — «Պարոններ...»

— «Բռաւօ. — Ս—ս—ս— Զանգիրատ»։

— «Ե..... շ շ նա ուզում է խօսել»։

— «Պարոններ, ասաց նա, ձեր ուշադրութիւնը քաղցր, հաճելի է ինձ համար։ Եւ, կարծես, հասկանում եմ ձեզ։ Երբ ես փոքր էի և զինուորական երաժշտութեան ձայն էի լսում, վազում էի նրա ետեւից և ինձ եւս զբաղեցնում էր ո՛չ այնքան երաժշտութիւնը, որքան այն, թէ ինչպէս մեծ փողից փչող զինուորը ուռցնում էր այտերիւր։ Ենթադրեմ եմ ձեզանից, պարոններ»։

— «Բռաւօ». — գոչեց ամբոխը. — «Մենք սիրում ենք ձեզ», — բարձր ասաց մէկը։

— «Ենթադրեմ եմ», մի անգամ եւս կրկնեց զրոյդ՝ զգացուած և սիրալիւր։

— «Բռաւօ»։

— «Պարոններ, ձայնը բարձրացնելով գոչեց մեր հերոսը, — թոյլ տուէ՛ք անկեղծ խօսել»:

— «Բռ—ա—ւօ»:

Իսկ սատանան կանգնել էր զրոյի ետեւում և միշտ ծիծաղում էր. — խորաւ մանկ:

— «Դուք ստրուկներ էք, որովհետեւ ստրուկներ էք: Ձեզ թակում են—լսում էք, ձեզ վիրաւորում են—ժպտում էք: Ձեզ բարկացնում են միայն կանայք, երբ համեղ ճաշ չեն պատրաստում, բայց դուք տանջւում էք կեանքի բարիքները վայելելու ազահուկութիւնից, դէպի միմեանց տաժած նախանձից և ստամոքսի անմարսողութիւնից: Երբ կօշիկը ցաւեցնում է ձեր ոտքը, դուք հառաչում էք»:

— «Օ, ինչ ճամարիտ է ասում Շոպենհաուէրը», բայց «ազատութիւն» կոչը լսելով, դուք մտածում էք. — «սա ի՞նչ է դուրս տալիս...» Սատանան ձեզ տանի: Եթէ դուք իմանալիք, թէ որքան ուղորմելի էք, որքան զգուշի՛ք, ինչպէս անտանելի՛ և ծանր է ձեր մէջ ապրել: Ձեզ ասում են. — կեանքը սարսափելի է, կեանքը մռայլ է, նա ամբողջովին արիւնքով է սնւում, դուք չէք հաւատում: Ձեր կեանքը միայն ստրկական է և ողորմելի և երբ ձեզ մատնացոյց են անում մահը և այդ ստրկութեան սարսափութիւնը, դուք անտարբեր էք մնում, հետաքրքրւում էք միայն մի բանով, թէ արդեօք գեղեցիկ է ասած: Էստէտիկներ, որ խեղճւում են ցեխի մէջ, գոնէ այդ ցեխը շուտ կուլ տւէ՛ք վերջացրէ՛ք»:

Ամբոխը հետզհետէ ցրուեց: Նա չի սիրում երկար ճառեր: Իսկ սատանան միշտ քրքրւում էր, — չէ՛ որ նա գիտէ այս բոլորի իսկական արժէքը: Բայց իր պարտականութեան կատարումով հիացած՝ ճառախօսը ոչինչ չը նկատեց:

— «Կեանքը — հերոսական մի պօէմա է, իսկ մարդը փնտռում է նրա սիրտը և չի գտնում, ցանկանում է ամեն բան իմանալ — և չի՛ կարողանում. ճգնւում է ամենազօր դառնալ, ինչպէս իր Հայրը

երկնքում — և նա անոյժ է իր թուլութեանը յաղթելու:

— Դուք լսե՛լ էք որեւէ բան ճամարտութեան արդարադատութեան մասին, երկրիս վճայ ապրող բոլոր մարդկանց ազատ և երջանիկ տեսնելու ցանկութեան մասին... Դուք կամենում էք միայն կուշտ լինել, տաք բնակարան ունենալ. ցանկանում էք խաղաղ ապրել — ահա՛ ձեր երջանկութիւնը: Իսկ ձեր՝ աւելի՛ լաւ երջանկութիւն՝ ձեռք բերելու ցանկութիւնը՝ մի զորով հինգ կոպէկ գնելու ցանկալութիւնն է: Երջանկութիւնը ձեռք են բերում ամուր, ուժեղ բազուկներով, իսկ դուք — վախկոտ, թոյլ, մեռած արարածներ էք, դուք նոյն իսկ ճանճ չէք կարող որսալ՝ առանց ուրիշի օգնութեան, դուք նոյն իսկ ճանճերի հետ կուլ էք մղում թունաւոր թերթիկների միջոցով՝ «Մահ ճանճերին», Ես խզում եմ ճանճերին: Նրանք սղզում են և դրանով խանգարում են քնի՛ր, բայց ես ուրբանութեամբ կը զբէ՛ր ճամար մի թերթիկ՝ «Մահ ճանճերին», որպէս զի դուք, կարգալով այն, թունաւորութեան հանճանգատութեամբ: Տեսնո՛ւմ եմ, որ ես ճամարիտ չեմ, — այստեղ դուք վրդովւում էք...: Եւ երբ դուք հանգիստ կեանք չէք վարում, — որովհետեւ ձեզ չի՛ բաւականացնում ձեր ստացած ոռճիկը ընտանիքին կերակրելու, կամ նրա համար, որ դաւաճանում են ձեր կանայք, — դուք հառաչում, փիլիսոփայութիւն ձեզ անուր, կեանքը ձեզ համար զգուշի և անտանելի է դառնում մինչեւ այն ժամանակ, երբ աւելացնում են ձեր ոռճիկները և կամ թէ՛ դուք նոր տիրուհիներ էք գտնում: Եւ կսկսէք անդադար պառաւական տրտունջներ, հիասթափութեան զզուելի հառաչներ արձակել՝ անէծք կարգալով կեանքի հասցէին, — դրանով դուք թունաւորում էք ձեր մատաղ զաւակների լսելիք: Դուք նրանց ուշադրութիւնը կենդրոնացնում էք կեանքի մանրութիւններին, նրա կեղտոտ կողմերի վրա, և նրանց ուղեղը բթացնում այն սրի պէս, որով կտրում են ոստեր և ոչ թէ՛ գլուխներ: Եւ յետոյ երեխաները,

ձանձրացած ձեր պատմութիւններից՝ կեանքի մասին, որը դուք չէք ճանաչում, դանդաղ գնում են ձեր հարթած շաւղով՝ ժամանակից առաջ ձերացած, սառած, թուլացած, առաջ են գնում նրանք և փնտրում խաղաղ, հանգիստ և անվրդով կեանք, գտնում են այն ու ապրում հանգիստ, իրենց հայրերի օրինակով։ Նրանք նման են նոր կրի, որով ծեփում են հին շինութեան պատերը։ Այդ փթած, կեղտոտ շէնքը ամբողջովին սնուած է մարդկանց արիւնով, որոնց նա ճնշել է։ Նա դողդուղում է զառամութիւնից, նրա սիրտը դուղում է շուտափոյթ խորտակուելու զգացմունքից և սարսափով սպասում է հալուածին, որպէս զի աղմուկով փչիչ։ Եւ ահա ոյժերը՝ հարուածը տալու համար, աճում, մեծանում են, հազիւ են կարողանում զսպել և ամեն կողմից դուրս են ծայթերում անհամբերութեան բոցերով։

Կը բորբոքուեն, աւելի՛ կը շատանան և այն ժամանակ հին շէնքը կը ցնցուի, փուլ կը գալ ձեր գլխին ու ձեզ կը ճմլի, թէեւ դուք միայն նրա համար էք պատժի արժանի, որ ոչինչ չէք արել։ Բայց կեանքում անմեղներ չկան...»։

Միայն մի քանի հոգի էին միացել։ Նրանք մի մասը խղճահարելով նայում էր զրոյին։ Նրանք սիրում էին կարդալ նորա գրուածքները, իսկ այժմ տխրուածամբ էին լսում նորա ճառը, որովհետեւ այս ճառի մէջ ոչ մի էստէտիքական բան չկար։ Ոմանք էլ ծաղրում էին։ Բուլղի համար էլ ձանձրալի էր և ոչ ոք չէր վիրաւորում։ Ահա՛ մի պատահի՛ դէմքը կնճեղով, զայրացած զոչեց. «Այդ բուլղը իօսքեր են, դուք այն սասցէք թէ ինչ գործնական ծրագիրներ ունէք»։ Իսկ մի յարգելի պարոն հառաչելով նկատեց. «Էհ, ես էլ փոքր հասակումս բոմանտիկ էի»։ Սեւ հագուստով մի կին հարցրեց. «Նա ի՞նչ է կանանց հայրոյում»։ Սատանան ծիծաղում էր...

— Եւ ձեզ պէտք է ասեմ և այն, որ դուք շատ էք սիրում ղոթախտ լինել։ Ես կարծում եմ, որ դուք այդ դիտմամբ էք

անում։ Զեզ պէտք չէ դէպի միմեանց յարգանք և սէր տածել, և ահա դուք ղոթախտանում էք, որպէս զի ուրիշները ձեզ խղճան և կարեկցին։ ()՝ երանի թէ ունենայիք կեանքը սիրելու առողջ և զօրեղ զգացմունք... Բայց չէ՛ որ դուք չէք սիրում կեանքը, դուք վախենում էք նրանից, դուք կամաց, գողի պէս, նրանից պատահներ էք պոկոտում... Ստորեւ մարդիկ, խեղճ արարածներ, Աստուած ձեր գլխին աւելի մեծ ղոթախտութիւններ բերի, որպէս զի դուք մի քիչ սթափուէք, մի քիչ կենդանանաք»։ Ճառախօսի առաջ երեք հոգուց մէկը վիրաւորուեց և ասաց. «Բայց մենք բոլորս խօս մայրպէս չենք... Եւ վերջապէս դա անարդարութիւն է »։

— «Պարոններ, ինձինք արդարութիւն մի պահանջէք, — այդ գոյութիւն չունի կեանքում, գոյութիւն չունի՝ առ այժմ։ — Ի՞նչպէս կարող է ձեր մէջ արդարութիւն լինել։ Եւ դուք բոլորդ միակերպ վատ էք։ Դուք—ամբոխ էք, ի՞նչպէս կարելի է ձեզ լաւերի և վատերի բաժանել։ Բոլորդ էլ ձեր երիտասարդ հասակում գիմնագիայում գինուել էք գիտութիւններով և ձեզ բոլորիդ նոյն բանն են սովորեցրել։ Ես կարծում եմ, որ ձեզ լաւ բանք են սովորեցրել, որովհետեւ, հաւատացած եմ, որ դուք թոյլ չէք տալ ձեզ վատ բան սովորելու։ Ես ղոթաւարանում եմ երեւակայել այնպիսի մի համալսարան, որտեղ պատանիներին սովորեցնէին մարդասեղութեան, չինոգիկական անտարբեր վերաբերմունքի դէպի կեանքը, չաղ պաշտօններ ստանալու ձգտումի և ուրիշ դոյնանման խորագիտութիւններ։ Զգիտեմ ինչո՛ւ ինձ միշտ թւացել է, որ այդ չեն սովորեցնում։ Սակայն, երբ դուք կեանք էք մտնում, այդ բոլոր զարեւիտութիւնները չեն վերանում՝ ձեր ներկայութեամբ։ Ես չեմ հաւատում, որ դուք ձեզ հետ նոր կեղտոտութիւններ էք բերում կեանքի, և ես այդ չեմ պնդի։ Ես միայն գիտեմ, որ դուք բացասելով հանդերձ սեփականութեան իրաւունքը, տէր էք սեփական տների... Գիտեմ, դուք կարողանում էք

ձեր մասին մտածել, բայց հարցնում եմ.
— Ի՞նչ էք արել կեանքի համար: Դուք բու-
լորդ միակերպ անտարբեր էք, ձեզանից
նոյն իսկ նրանք, որոնք զգացումս ասում
են, թէ ո՛րքան ապականութիւն կայ ձեր
շուրջը... Փորձեցէք մաքրել դրանց: Հե-
ռացրէ՛ք դրանց ձեզանից: Ո՛չ, բայց ձե-
զանից լաւերը, ես տեսել եմ, զգուանցով
հեռու են մնացել նրանից: Մաքուր լինե-
լու ձգտումը — վատ ձգտում է՛, բայց
մաքուր մարդը չի վախենալ կեղտից: Խոստովանենք, որ բոլո՛րս ենք մեղա-
ւոր, որ կեանքը այսպէս դաժան է: Երկ-
րիս վրա գոյութիւն չունին արդարներ,
առ այժմ ո՛չ: Բայց ո՛րտեղից էք դուք ձեռք
բերել այդքան ստրկական ոգի, և ո՛րտեղ
էք սովորել ստրկօրէն վախենալ ձեր կա-
շուից: Ես պնդում եմ — բոլոր կեղտոտ և
զգուելի բաները, որ ամեն քայլափոխում
աչքի են զարնում, — արագ, ուժգին և
այնպէս պարզ կերպով են անում զար-
գանում ձեր շուրջը միայն այն պատճա-
ռով, որ հիմնուած են հաստատ հողի վրա,
մեր սեպական կաշուից վախենալու ստը-
կական զգացմունքի վրա: Որ կեանքը
այսպէս դաժան, ամօթարե՛ր է, դրանում
մենք բոլո՛րս հաւասարաշահի ենք մեղա-
ւոր: Եւ եթէ որ ես հաւատայի անէծքի
ոյժին, ես կ'անիծէի բոլորիդ, բայց ես
հաւատում եմ մի ուրիշ բանի, — որ շու-
տով կը գան ուրիշ մարդիկ, համարձակ,
անկեղծ և ուժեղ մարդիկ, — շուտով...»

— «Է՛, բաւական է», — ասաց սաստա-
նան ժպտալով: Մեր երիտասարդը աչքերը
վեր բարձրացրեց և ի՛նչ տեսաւ. — նրա
առաջ և նրա շուրջը ոչ ոք չըկար: «Տար-
օրինակ է, ասաց նա, ո՛ւր գնացին: Ես
դեռ չեմ վերջացրել...»:

— «Նրանք այլուեցին քո խօսքերի
կրակից. հա՛-հա՛-հա՛. — Տեսնո՞ւմ ես ա-
ռաստաղի մուրը. — Այդ է բոլորը, ինչ
որ նրանցից մնաց: Գնա՛...»

Չը գիտեմ, թէ յետոյ ինչ պատահեց
մեր երիտասարդի հետ. ես չեմ ուզում
ընտրել այս պատմութեան վերջը. ես
դրանում ո՛չ մի լաւ բան չեմ նախատե-

սում հերոսիս համար: Բայց ես հաւատա-
ցած եմ, որ լաւ է՛, երբ գրողը շատ հա-
մակրողներ ունի: Եւ իւրաքանչիւր մարդ
ով գործ ունի հասարակութեան հետ,
նա պէտք է իր շրջապատի օղբ մաքրի
ճշմարտութեան կարողեան կիսլօտայով:
Վ. Տ. ԱՐՐ.

ՊԵՏՐՈՍ ԹԱՓՅԷ ԵՒ ՊԵՏՐՈՍ ԹՈԹՈՎ

Զ. Ն. ԱՎԻԵԱՆՆԻ

Անձնաւորութեանց շփոթութիւն մը, —
դիտել կու տայ Մեծապատիւ Տէր Նո-
րայր, — տեղի ունեցած է Ձեր պատմական
յօդուածին մէջ՝ որուն վերնագիրն է.
«Հայ վրական յարաբերութիւնք Դ-ի դա-
րուց մէջ», (Հանդես Ամսօրեայ 1907, թիւ
9-10, սեպտեմբեր-հոկտեմբեր, էջ 289):
Երկտորեակներուն պէս՝ որ Շէյքափիւրի
մէկ խաղին մէջ իրարու հետ կը շփոթուին
իրենց դէմքի նմանութեան պատճառաւ,
երկու պատրիարքներ, — երկուքն ալ
Պետրոս անուամբ, — իրարու դէրը կ'առ-
նեն Ձեր քննութեան մէջ:

Կը գրէք. «Անտիոքի պատրիարգութեան
գլուխն անցաւ Պետրոս Թոթով, այն է
ընդ մէջ ամաց 471-488. Վրաց յատուկ
Մետրապոլիտութիւն տրուեցաւ, այնպէս որ
նահանգը եղաւ» (Հանդէս էջ 291. այս խօս-
քը կոչումս մ'է Acta SS. ԺԲ հատորէն,
էջ 644):

«Այս Պետրոսն (Անտիոքացի), ինչպէս
կը դիտէ Բրոսէ (Hist. I. 192. ծ. 2)
պիտի ըլլայ Պետրոս Թոթովն, որ կ'իյ-
նայ ընդ մէջ ամաց 475-488» (անդ):

«Յամենայնի չեմ կրնար համամիտ ըլ-
լալ բոլանդեանիս, յատկապէս այն կէտին
մէջ թէ մինչեւ ԳՊետրոս Փուղղոն, ուրեմն
մինչեւ Ե. դարու վերջին քառորդն միայն՝
հայ կաթողիկոսէն կը ձեռնադրուէին և
այն՝ լոկ եպիսկոպոս». (անդ):

«Թ. Բագսամունի խօսքերն թէ Պետրոս
Թափիշի ժամանակ (է դարու Բ կիսուն)